

ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ապահովման համար կարևորագույն գործոն է հանդիսանում երկրում աղետների ռիսկերի նվազեցման արդյունավետ համակարգի ձևավորումը և զարգացումը՝ տնտեսության բոլոր ոլորտների և հասարակության առավել լայն շերտերի ներգրավմամբ:

2. Աղետների ռիսկերի նվազեցման համակարգը գործընթացների և գործառույթների մի շրջանակ է, որի նպատակն է բարձրացնել աղետներին դիմակայելու կարողությունները: Այն նպատակաուղղված է կանխելու կամ կանխարգելելու վտանգները, նվազեցնելու այդ վտանգների հնարավոր բացասական ազդեցությունը, ինչպես նաև նպաստելու հասարակության կայուն զարգացմանը:

3. Աղետների ռիսկերի նվազեցման գործընթացը չի կարող հանդիսանալ որևէ կառույցի մենաշնորհ: Այն պահանջում է համապարփակ մոտեցում՝ երկրի բոլոր կառույցների ռեսուրսների մոբիլիզացում, քաղաքական, տեխնիկական, գիտական ինչպես նաև մասնակցային բաղադրիչների կիրառում:

4. Աղետների ռիսկերի նվազեցման համակարգը, ներգրավելով երկրի բոլոր ոլորտները և հասարակության բոլոր շերտերը, իրենից ներկայացնում է պետության զարգացման կարևոր գործոն: Այն ենթադրում է համախմբված գործողություններ՝ կառավարության, պետական այլ կառույցների, համայնքների և համայնքային ենթակայության կառույցների, քաղաքացիական հասարակության, գիտական հաստատությունների, մասնավոր հատվածի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների կողմից:

5. Աղետների ռիսկերի նվազեցման համակարգի ձևավորումն ու զարգացման ապահովումը պահանջում են աղետների ռիսկի նվազեցման միասնական ռազմավարության առկայություն, որով սահմանվում են աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարական նպատակները, խնդիրները, սկզբունքները, հստակեցվում են աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում ներգրավված դերակատարների իրավունքներն ու գործառույթները, տրվում են հաստատությունական հիմքերի զարգացման ուղիները, բացառում են գործառույթների կրկնությունները՝ հիմք հանդիսանալով երկրում ռիսկերի նվազեցման կայուն և շարունակական գործընթացի ապահովմանը, որով և աղետակայուն երկրի ձևավորմանը:

6. Հաշվի առնելով վերջին տարիներին կլիմայի փոփոխության (ԿՓ) հետ կապված աղետների քանակի և ինտենսիվության աճը, ինչպես նաև դրանց կողմից տնտեսության տարբեր ճյուղերին հասցրած զգալի կորուստները՝ անհրաժեշտություն է առաջացել նոր լուծումներ և մոտեցումներ գտնել կլիմայական ռիսկի կառավարման (ԿՌԿ) և ինտեգրման համար աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության մեջ:

7. Աղետների ռիսկերի նվազեցման համակարգի ձևավորման և զարգացման գործընթացում իր ուրույն դերն ունի կրթական համակարգը, առանց որի անհնար է ապահովել առաջադրվող խնդիրները: Աղետների ռիսկի նվազեցման ռազմավարության մեջ անհրաժեշտ է ներառել աղետների ռիսկերի նվազեցման կրթությունը, որը հիմնականում պայմանավորված է հասարակության ձևավորման և հետագա գործունեության մեջ ունեցած դերի առանձնահատկություններով ու Հյոգոյում կայացած միջազգային համաժողովի ընթացքում առաջարկված գործողությունների ծրագրով:

8. Աղետների ռիսկերի նվազեցման համակարգում իր առաջնային դերն ունի տեղեկատվության և հանրային իրազեկման բաղկացուցիչը, որը լուծում է ծառայող հետևյալ հարցերը՝ տեղեկատվության կառավարում, իրազեկում ու պատրաստվածության բարձրացում, հասարակայնության հետ կապերի ապահովում և հասարակության ուսուցում:

9. Յոկոհամայում կայացած միջազգային համաժողովի ընթացքում առաջարկված ռազմավարության դրույթներից մեկն ամրագրում է, որ ռիսկի գնահատումն աղետների ռիսկերի նվազեցման քաղաքականության և չափորոշիչների հաջող և համարժեք իրականացման անհրաժեշտ նախապայման է: Ռիսկերի գնահատման հիմնական նպատակն է ապահովել անվտանգություն՝ հասարակության բոլոր ներկայացուցիչների համար, ուստի անհրաժեշտ է հավասարապես հաշվի առնել կանանց և տղամարդկանց դերերը և պատրաստվածության աստիճանը: Աղետների

ոիսկերի նվազեցման գործողությունների ներքո գեներային զգայուն քաղաքականությունների ներդրման ամենակարևոր պայմաններից մեկը կանանց մասնակցության և ներգրավվածության խրախուսումն է որոշումների կայացման համակարգում և պաշտոններում:

ԳԼՈՒԽ II. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

10. Աղետների ոիսկերի նվազեցման ռազմավարությունը բխում է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունից և համահունչ է Հյոգոյի գործողությունների ծրագրի գերակա ուղղություններին, որոնք են՝

1) երաշխավորել, որ աղետների ոիսկերի նվազեցումն ազգային գերակայություն է և իրականացման առումով գտնվում է ամուր ինստիտուցիոնալ հիմքերի վրա.

2) բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ոիսկերը և բարելավել վաղ ազդարարման համակարգը.

3) օգտագործել գիտելիքները, նորարարությունները և կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար.

4) նվազեցնել աղետների հիմքում ընկած ոիսկային գործոնները.

5) բոլոր մակարդակներում բարձրացնել աղետներին արդյունավետ արձագանքելու պատրաստվածությունը, ապահովել արտակարգ իրավիճակների կառավարման իրազեկման համակարգի կայացումը, համակարգում ընդգրկված մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև հասարակության միջև կարգավորել և կառավարել տեղեկատվական ներքին հոսքերը:

11. Աղետների ոիսկերի նվազեցման գործունեությունը պահանջում է բոլոր կառույցների կարողությունների միավորում: Այդ գործունեությունն արդյունավետ ապահովել հնարավոր է ներգրավելով պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից), միջազգային կազմակերպությունների, կամավորական միավորումների և անհատի կարողությունները:

12. Աղետների ռիսկերի նվազեցման ոլորտի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՀ կառավարությունը: Վերջինս սահմանում է համապատասխան կարգեր, հաստատում նորմեր և այլն: Այդ ոլորտը բաղկացած է ֆունկցիոնալ և տարածքային ենթահամակարգերից:

13. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով աղետների ռիսկի նվազեցման գործընթացների համակարգման և վերահսկողության լիազորությունները վերապահված են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը:

14. Աղետների ռիսկերի նվազեցման համակարգի հիմնական դերակատարներն են՝

- 1) պետական կառավարման հանրապետական մարմինները.
- 2) տարածքային կառավարման պետական մարմինները.
- 3) տեղական ինքնակառավարման մարմինները.
- 4) կազմակերպությունների (այսուհետ՝ օբյեկտների) կառավարման մարմինները.
- 5) «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամը՝ որպես նախաձեռնող և աջակցող օղակ.

6) Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունները և դիվանագիտական ներկայացուցչությունները.

7) տարբեր մակարդակների ներկայացուցիչների ներգրավմամբ, աղետների ռիսկերի նվազեցման գործունեություն ծավալելու նպատակով, ստեղծված հանձնաժողովները:

15. Աղետների ռիսկերի նվազեցման բնագավառի հիմնական դերակատարներն են՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, որը մշակում, իրականացնում և համակարգում է օրենքով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետևյալ ստորաբաժանումները՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությունը, որն իրականացնում է քաղաքացիական պաշտպանությունը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը, ինչպես նաև համակարգում է

արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքները,

բ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալությունը, որն իրականացնում է Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկերի նվազեցման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգումը, ինչպես նաև հնարավոր երկրաշարժերի կանխատեսման համակարգերի կառավարման ապահովումը,

գ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական ռեզերվների գործակալությունը, որն ապահովում է բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութական պաշարների պահուստի ստեղծումը, պահպանումը և թարմացումը,

դ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը, որն իրականացնում է հրդեհային անվտանգության կանոնների, տեխնիկական անվտանգության նորմատիվների ու պահանջների պահպանման ու կատարման նկատմամբ վերահսկողություն,

ե. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որն իրականացնում է հիդրոոդերևութաբանական գործունեության բնագավառի պետական քաղաքականության ու ռազմավարության մշակումը և իրագործումը, հիդրոոդերևութաբանական երևույթների ռեժիմային և հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների աշխատանքները,

զ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որն իրականացնում է արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման փորձաքննություն,

է. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավար կազմի ու մասնագետների բնակչության աղետների ռիսկերի

նվազեցման ուսուցում, ինչպես նաև օժանդակում հանրապետության կրթական համակարգում աղետների ռիսկերի նվազեցման ուսուցմանը,

ը. «Տեղեկատվական և ազդարարման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունն ապահովում է արտակարգ իրավիճակներում տեղեկատվության կառավարման և ընդհանուր իրազեկման հետ կապված գործընթացների իրականացումը,

թ. Ճգնաժամային կառավարման կենտրոնն ապահովում է խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում, ինչպես նաև ահաբեկչության հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարման օպերատիվությունը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվական գործընթացների կենտրոնացումը, ինչպես նաև տեղեկատվության ժամանակակից եղանակներով օպերատիվ արտացոլումը, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացումը,

ժ. լրատվական ծառայությունը, որն ապահովում է արտակարգ իրավիճակներում տեղեկատվության կազմակերպման, ինչպես նաև ընդհանուր իրազեկման հետ կապված խնդիրները.

3) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝

ա. ապահովում է առողջության սպառնալիքների մասին բնակչության իրազեկումը,

բ. իր իրավասության շրջանակներում իրականացնում է փորձաքննություն և տալիս է համապատասխան եզրակացություն հնարավոր առողջապահական ռիսկերի վերաբերյալ,

գ. ճառագայթային վթարի դեպքում մասնակցում է Հայկական ատոմային էլեկտրակայանի արտանախագծային վթարների պլանով նախատեսված միջոցառումներին,

դ. քիմիական և կենսաբանական վթարների դեպքում իրականացնում է հսկողություն տարահանված բնակչության ժամանակավոր կացարաններում խմելու ջրի, սանիտարակենցաղային պայմանների նկատմամբ,

ե. համապատասխան եզրակացություն է տալիս աղետի հետևանքների սանիտարահամաճարակային իրավիճակի վերաբերյալ,

զ. իրականացնում է հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, կազմակերպում է օպերատիվ բժշկական խմբերի՝ ժամանակին աղետի գոտի հասնելը և ապահովում առաջնային միջոցառումների ձեռնարկումը,

է. իրականացնում է տուժած բնակչության բժշկական սպասարկումը, տարահանման ժամանակ ապահովում է տարահանվող բնակչության ուղեկցումը և բուժսպասարկումը միջանկյալ ու տարահանման վերջնակետերում բուժսպասարկումը և այլն.

4) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը՝

ա. համակարգում է համագործակցությունը միջազգային գործընկերների հետ, միջազգային մարդասիրական ծրագրերի իրականացումն ու փոխօգնության տրամադրման գործընթացները,

բ. ապահովում է միջազգային համագործակցությունը, միջպետական համաձայնագրերի և պայմանագրերի մշակման և կնքման գործընթացները, հումանիտար օգնության կազմակերպման գործընթացները, միջազգային փրկարարական ուժերի և կառույցների մասնակցությունն արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին և այլն.

5) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունն իրականացնում է էկոլոգիական անվտանգության կարգավորումն ու վերահսկումը, շրջակա միջավայրի պահպանության և մոնիթորինգի ապահովումը, ինչպես նաև էկոկրթության և կլիմայի փոփոխության հիմնախնդիրների հետ կապված գործառույթները և այլն.

6) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունն իրականացնում է անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայություններ, անտառների պետական մոնիթորինգ, հակասեղավային միջոցառումներ, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման և իրականացման պետական կառավարման լիազոր մարմին.

7) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունն իրականացնում է Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային կամ ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության, Հայկական ատոմային էլեկտրակայանի, հիդրոէլեկտրակայաններին պատկանող ջրամբարների, էներգակիր համակարգերի, կառույցների կայուն աշխատանքի ապահովման, անվտանգության բարձրացման և անվտանգ շահագործման միջոցառումներ, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է վերահսկողություն բաց և ստորգետնյա եղանակով մշակվող հանքավայրերի շահագործման նկատմամբ՝ ինչպես առօրյա պայմաններում, այնպես էլ աղետների ծագման դեպքում.

8) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է աղետների կառավարման քաղաքացիական պաշտպանության հարցերով ուսուցման կազմակերպումը հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում.

9) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը մասնակցում է մարզպետարանների և համայնքների կողմից աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ գործունեության իրականացմանը.

10) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունն իրականացնում է սեյսմակայուն շինարարությանը վերաբերող գիտական հետազոտությունների և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների, սեյսմակայուն շինարարության բնագավառի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման գործընթացի, տարածքների հետազոտության և ճարտարագիտական պաշտպանության աշխատանքների կազմակերպում և համակարգում.

11) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝

ա. ապահովում է սննդամթերքային և նյութատեխնիկական մատակարարումը, ինչպես նաև իրականացնում է քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների չափագիտական հսկողությունը,

բ. իրականացնում է տարբեր ոլորտների զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման ենթածրագրերի ընդգրկման համակարգումն ու հսկողությունը.

12) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն իրականացնում է իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ գործունեություն.

13) միջազգային գործընկերները, որոնք օժանդակություն են ցուցաբերում Հայաստանում աղետների ռիսկերի նվազեցման համակարգի զարգացմանը: Հիմնական գործընկերների թվում են՝ Համաշխարհային բանկը, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամը, Զարգացման և համագործակցության շվեյցարական գործակալությունը, Միջազգային առողջապահական կազմակերպությունը, «Վորլդ Վիժըն» կազմակերպության հայաստանյան գրասենյակը, Գերմանիայի տեխնիկական օժանդակության գործակալությունը, ՕԲՍՖԱՄ-ը, Պարենի համաշխարհային կազմակերպությունը, ԵԱՀԿ-ն, Հայկական կարմիր խաչի ընկերությունը և այլն.

14) Հասարակական և գիտական կազմակերպությունները, որոնք հանդիսանում են կարևոր դերակատարներ և նպաստում են աղետների ռիսկերի նվազեցման համակարգի գիտական ներուժի զարգացմանը, ինչպես նաև համայնքներում աղետների ռիսկերի նվազեցման խնդիրների իրականացմանը: Հիմնական գործընկերների թվում են՝ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը, Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը, Հայկական կարմիր խաչի ընկերությունը, «Գեոտիսկ» գիտահետազոտական ընկերությունը, «Գառնի» միջազգային կենտրոնը, Հայաստանի սեյսմոլոգների և երկրի ֆիզիկայի ընկերակցությունը, Հայսեյսմոլոգիկա գիտահետազոտական ինստիտուտը, Հայջրնախագիծ ինստիտուտը, «Գեոկոմ» գիտահետազոտական ընկերությունը և այլն:

ԳԼՈՒԽ III. ՌԱԶՄՆՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ (ՄՇԱԿՄԱՆ) ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ

16. Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության մշակման հիմնական նախադրյալներից է Հայաստանի աղետավտանգավորության աստիճանը: Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր: Վերջին քսան տարվա ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերը վնաս են հասցրել մեծ թվով մարդկանց, ինչպես նաև հանգեցրել զգալի տնտեսական վնասների: 1988 թվականի Սպիտակի երկրաշարժն ամենաաղետալի սեյսմիկ իրադարձությունն էր: Դրա արդյունքում զոհվեց 25000 մարդ, 1500-ը դարձան հաշմանդամ, իսկ 517000-ը անօթևան: Սպիտակի երկրաշարժը զգալի վնաս պատճառեց մի քանի քաղաքների՝ հանգեցնելով 2011 թվականի դեկտեմբեր ամսվա փոխարժեքով հաշվարկված՝ 14,2 մլրդ դոլարին համարժեք 5467,0 մլրդ Հայաստանի Հանրապետության դրամի ուղղակի տնտեսական վնասի:

17. Երկրի տարածքի մեկ երրորդը գտնվում է սողանքավտանգ գոտում: Սողանքավտանգ տարածքները հիմնականում լեռների ստորոտներում և լեռնային տարածքներում են: Մոտ 470000 մարդ կամ երկրի ողջ ազգաբնակչության 15 տոկոսը ենթակա է այս վտանգին: Սողանքների պատճառած միջին տարեկան վնասը կազմում է մոտ 2011 թվականի դեկտեմբեր ամսվա

փոխարժեքով հաշվարկված՝ 10 մլն դոլարին համարժեք 3,85 մլրդ Հայաստանի Հանրապետության դրամի:

18. Կլիմայի փոփոխության ազդեցություններն այսօր զգացվում են ողջ աշխարհում և Հայաստանը բացառություն չէ: Այն բնորոշվում է խոցելի էկոհամակարգերով, կլիմայի չորայնությամբ, ակտիվ արտածին ու անապատացման գործընթացներով և հաճախակի նկատվող տարերային աղետներով, որոնք երկիրն առավել զգայուն են դարձնում կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ: Վերլուծությունը ցույց է տվել, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եղանակային և կլիմայական վտանգավոր երևույթների ուժգնությունը և հաճախականությունն աճել է: Բնական աղետների շարքում Հայաստանը բոլորից շատ ազդեցություն է կրում երաշտներից, վաղ գարնանային ցրտահարություններից, կարկտահարությունից, սելավներից, սողանքներից, ուժեղ քամիներից և անստառային հրդեհներից:

19. 2004-2007 թվականների ընթացքում սելավները վնաս են հասցրել մոտ 200 բնակավայրերի և հիմնական տրանսպորտային ուղիների 600 տեղամասի: Սելավների հասցրած միջին տարեկան վնասը վերջին չորս տարվա ընթացքում կազմել է 2011 թվականի դեկտեմբեր ամսվա փոխարժեքով հաշվարկված՝ 2,9 մլն դոլարին համարժեք 1165,5 մլն Հայաստանի Հանրապետության դրամի: 2001-2006 թվականների կարկուտների թիվը հասել է 46-ի (կարկտի միջին տրամագիծը կազմել է 22-35 մմ): Անցյալ տասնամյակում ուժեղ հեղեղումները պատճառ են հանդիսացել նույնիսկ մարդկային զոհերի: 2000 թվականի երաշտից գյուղատնտեսական սեկտորի կորուստները գնահատվել են 2011 թվականի դեկտեմբեր ամսվա փոխարժեքով հաշվարկված՝ 66.7 մլն դոլարին համարժեք 25679,5 մլն Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմելով գյուղատնտեսական համախառն արտադրանքի 10.1 տոկոսը:

20. Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0.85 °C-ով և տեղումների նվազում 6 տոկոսով: Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները Հայաստանի Հանրապետության տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ:

21. Հայաստանում կլիմայի փոփոխության տարբեր սցենարներով կատարված հաշվարկների համաձայն 2030, 2070, 2100 թվականների կտրվածքով կանխատեսվում է ջերմաստիճանի նշանակալի և անընդմեջ աճ, հատկապես, գարնան ու ամռան ամիսներին:

Գումարային գետային հոսքը մինչև 2030 թվականի կնվազի 6,7 տոկոսով, մինչև 2070 թվականի՝ 14,4 տոկոսով, մինչև 2100 թվականի 24,4 տոկոսով (1961-2100 թվականների համեմատ): Ջրային ռեսուրսների նվազեցումն անմիջականորեն կանդրադառնա գյուղատնտեսության վրա՝ դրանով առաջացնելով պարենային ապահովվածության մակարդակի նվազում:

22. Տեխնոլոգիական աղետները նույնպես զգալի ռիսկի աղբյուր են: Հայաստանում կան 26 քիմիական գործարաններ, որոնք օգտագործում են ամոնիակ, քլոր, քլորաթթու, ազոտաթթու և այլ քիմիական նյութեր: 1500-ից ավելի կազմակերպություններ հատկանշվում են բարձր պայթյունավտանգությամբ և հրդեհավտանգությամբ: Մեծամորի ատոմակայանը գտնվում է սեյսմակայուն գոտում:

23. Հայաստանի ազգաբնակչությունը, տնտեսությունը և շրջակա միջավայրը մեծապես խոցելի են բնական աղետների նկատմամբ: Առավել նշանակալից կարելի է համարել այն փաստը, որ Համաշխարհային բանկի տվյալներով աղքատության մակարդակը կազմում է 30 տոկոս, մինչդեռ աղքատ ազգաբնակչությունը կենտրոնացած է գյուղական համայնքներում և մարզերում գտնվող քաղաքներում: Ուրբանիզացիայի բարձր մակարդակի (64 տոկոս) պատճառով աղետների և հատկապես սեյսմիկ ռիսկերը կենտրոնացած են քաղաքներում: Մեծապես խոցելի է մնում տնտեսությունը: Ամեն տարի 20 տոկոս հավանականություն կա, որ խոշոր աղետի պատճառով տեղի է ունենալու համախառն ներքին արդյունքի 12,7 տոկոսի անկում: 1990-2005 թվականների ընթացքում Հայաստանը կորցրեց իր անտատապատ մակերեսի 20 տոկոսը կամ մոտավորապես 6300 հեկտար անտառ, ինչի արդյունքում զգալիորեն մեծացել է սելավների և սողանքների հավանականությունը: Անհետաձգելի անհրաժեշտություն է բնական աղետների նկատմամբ դիմադրողականության բարձրացումը, որ կարող է իրականացվել աղետների ռիսկերի նվազեցման բոլոր մակարդակներով զարգացման ծրագրերի մեջ ինտեգրելու և կարողությունների զարգացման միջոցով:

24. Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության ձևավորման համար կարևոր նշանակություն ունի ներկայումս առկա ինստիտուցիոնալ և իրավական դաշտը: Սկսած 1991 թվականից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ է եղել աղետների կառավարման օրենսդրական դաշտի ձևավորմանը: Անցնելով զարգացման յուրօրինակ ճանապարհ՝ այն կայացել է սահմանելով և կանոնակարգելով աղետների կառավարման համակարգում ընդգրկված բոլոր դերակատարների իրավունքներն ու պարտականությունները:

25. Օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակում աղետների կառավարման ոլորտն առավելապես կանոնակարգված է: Ընդունվել են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Հիդրոտեխնիկական գործունեության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին», «Հայաստանի փրկարար ծառայության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ինչպես նաև բնագավառին առնչվող բազմաթիվ այլ օրենքներ:

26. Օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակներում սահմանված են հանրապետական գործադիր մարմինների, այլ գերատեսչությունների, մարզային և համայնքային իշխանությունների իրավասություններն ինչպես ընդհանուր առումով, այնպես էլ հնարավոր արտակարգ իրավիճակ առաջացնող երևույթների մասնավոր դեպքերում:

27. Հայաստանի աղետների ռիսկերի նվազեցման համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումն իրենից ներկայացնում է էվոլյուցիոն գործընթաց, որի սկիզբը դրվել է 1991 թվականին՝ երկրի անկախացումից հետո: Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծել է արտակարգ իրավիճակների կառավարման միասնական համակարգ որտեղ՝

1) ֆունկցիոնալ ենթահամակարգ, որն իր մեջ ընդգրկում է նախարարություններ և դրանց ենթակայության օբյեկտներ, միջազգային կազմակերպություններ, և ունի աղետների ռիսկերի նվազեցման կառավարման 2 աստիճան՝

ա. հանրապետական,

բ. կազմակերպությունների (այսուհետ՝ օբյեկտային).

2) տարածքային ենթահամակարգ, որն իր մեջ ընդգրկում է տարածքային կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ և օբյեկտներ, և ունի աղետների ռիսկերի նվազեցման կառավարման երեք աստիճան՝

ա. տարածքային,

բ. տեղական,

գ. օբյեկտային:

28. Միասնական համակարգի առկայությունը հնարավորություն է տալիս ապահովել հորիզոնական և ուղղահայաց համագործակցություն աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում ներգրավված պետական և ոչ պետական բոլոր կառույցների միջև:

29. Աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում միջազգային գործունեության ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը՝

1) միացել է հնարավոր արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների, արտակարգ իրավիճակների կառավարման, հետևանքների նվազեցման և վերացման վերաբերյալ ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի (նաև Եվրամիության) շրջանակներում կնքված մի շարք կոնվենցիաների և համաձայնագրերի.

2) արտակարգ իրավիճակների հակազդման և փոխօգնության բնագավառում համագործակցում է սահմանակից ու տարածաշրջանի պետությունների հետ, և նրանց հետ կնքել է համապատասխան համաձայնագրեր ու պայմանագրեր.

3) հետևողականորեն շարունակում է այլ պետությունների հետ արտակարգ իրավիճակներից պաշտպանության և համագործակցության համաձայնագրերի կնքման և համատեղ գործողությունների իրականացման գործունեությունը.

4) 2005 թվականին, որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, անդամակցել է Հյոգոյի գործողությունների ծրագրին, որը սահմանում է աղետների ռիսկերի նվազեցման պրոակտիվ և կանխարգելիչ մոտեցում:

30. Հիմնական նախադրյալներից է նաև աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության կապը և ներդաշնակությունը երկրի կայուն զարգացման ու ազգային անվտանգության ռազմավարությունների հետ: Աղետների ռիսկերի նվազեցումը կարևորվում է Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարություններում: Ազգային անվտանգության, ինչպես նաև կայուն զարգացման ռազմավարությունները պատշաճ տեղ են հատկացնում աղետների ռիսկերի նվազեցման համակարգի ամրապնդմանը՝ այն դիտարկելով որպես նախադրյալ ազգային անվտանգության և կայուն զարգացման ապահովման համար:

31. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ աղետների ռիսկերի նվազեցման ոլորտի վտանգներից հատկապես առանձնացված են հետևյալները՝

1) սահմանակից շրջաններում, ինչպես նաև անդրազգային համընդհանուր մահաբեր համաճարակների բռնկումը և բնական ու տեխնածին աղետները.

2) Հայաստանի Հանրապետության հետագա ուրբանիզացումը՝ կապված սեյսմիկ գոտիներում բնակչության խիտ բնակեցման, գյուղական շրջաններում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման, սահմանամերձ գյուղերի ամայացման վտանգների հետ.

3) ենթակառուցվածքների ցանցի ոչ բավարար մակարդակը: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է լրացուցիչ ճանապարհների, ջրատարների, կապի համակարգերի և այլ ենթակառուցվածքների զարգացման կարիք զգալ.

4) պետության տարածքում, սահմանակից շրջաններում, ինչպես նաև տարածաշրջանային համաճարակների բռնկումը, ավերիչ երկրաշարժերը և այլ բնական ու տեխնածին աղետները:

32. Սույն ռազմավարության 31-րդ կետում նշված և աղետների ռիսկերի նվազեցման այլ ոլորտի սպառնալիքների կանխումը, դրանց հետևանքների վերացումը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման նախադրյալ: Ազգային ռազմավարությունները որպես կարևորագույն խնդիրներ են դիտարկում աղետների ռիսկերի նվազեցման համակարգի արդիականացումը և հետագա զարգացումը՝ շեշտը դնելով մասնավորապես հետևյալ խնդիրների վրա՝

1) բնական և տեխնածին աղետների կանխատեսմանն ու վաղ ազդարարման, դրանց արագ արձագանքման համակարգի զարգացումը, Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացումը.

2) արտակարգ իրավիճակների ռիսկերի բացահայտման և հաղթահարման կառույցների ստեղծումը.

3) բնակչության համապատասխան իրազեկության ու կրթվածության մակարդակի ապահովումը:

33. Կրթական ոլորտում, Սպիտակի երկրաշարժի դասերից ելնելով, Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ եղան աղետների ռիսկերի կառավարման հաստատությունական հիմքերի ձևավորմանը, անհրաժեշտ ծրագրերի ներդրմանը: Այդ կառույցների ստեղծումը նպաստեց բարձրագույն ուսումնական հաստատություններում և հանրակրթության ոլորտի դպրոցներում ռիսկերի նվազեցմանն ուղղված ծրագրային ուսուցման իրականացմանը: Աղետների ռիսկերի նվազեցման ցուցանիշներն ընդգրկվեցին հանրակրթության կրթական չափորոշիչներում, որը հնարավորություն է տալիս աղետների ռիսկերի նվազեցման կրթությունն իրականացնել նաև տարրական և միջին դպրոցներում, ինչպես նաև նախադպրոցական հաստատություններում: Կանոնակարգված է ղեկավարների և մասնագետների պարբերաբար վերապատրաստման գործընթացը: Մշտապես իրականացվում է ուսուցման գործընթացի

ինտեգրում միջազգային ծրագրերում, ինչպես նաև միջազգային զարգացումների ինտեգրում տեղական ծրագրերում: Գիտելիքի և փորձառության առկա կարողությունները և դրանց հետագա զագացման ապահովումը հանդիսանում են աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացման, ինչպես նաև անվտանգության և աղետներին դիմակայման կուլտուրայի ձևավորման հիմնաքարերից մեկը:

34. Իրազեկման գործընթացների ապահովման նպատակով աղետների ռիսկերի կառավարման ոլորտի հաստատութենական կայուն հիմքերի ձևավորումը հանգեցրեց հանրապետությունում աղետների արձագանքման լրատվության և տեղեկատվական դաշտի ձևավորմանը՝ ապահովելով վերջինիս անընդհատ զարգացումը՝ հետագայում լրացնելով այն՝ ռիսկերի նվազեցմանն ուղղված իրազեկման գործընթացներով: Այն արտահայտվում է իրավական դաշտում ներառված աղետների հետ կապված տեղեկատվության փոխանակման կանոնակարգմամբ՝ անկախ կազմակերպարավական տեսակից, բոլոր լրատվական կառույցների աշխատակիցների վերապատրաստմամբ և ուսուցմամբ, այդ մարմինների և լիազորված մարմնի միջև կապերի ստեղծմամբ, բնակչության իրազեկմանն ուղղված մասնագիտացված կառույցների և տեղեկատվական միջոցների ստեղծմամբ, իրազեկման ինտեգրմամբ միջազգային գործընթացներին և զարգացումներին, միջազգային փորձի ներդրմամբ՝ իրազեկման ոլորտում և այլն: Նման դաշտի առկայությունն անժխտելիորեն նպաստում է անվտանգության և աղետների դիմակայման կուլտուրայի ձևավորմանը՝ հանդիսանալով աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացման կարևորագույն բաղկացուցիչ:

ԳԼՈՒԽ IV. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

35. Առկա են մի շարք մարտահրավերներ, որոնք կարող են հանդիսանալ աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության արդյունավետ իրականացման խոչընդոտ: Դրանք են՝

1) պետական կառույցների միջև ոչ արդյունավետ համագործակցությունը: Պետական կառույցների միջև որոշ բյուրոկրատական դրսևորումների առկայությունը խոչընդոտում է աղետների ռիսկերի նվազեցման հարցերի լուծման ընթացքում լիարժեք համագործակցությանը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարությունը կնպաստի գործող հարաբերությունների հստակեցմանը և ինստիտուցիոնալ դաշտի կանոնակարգմանը.

2) տարածաշրջանային աղետների վտանգների առկայությունը: Տարածաշրջանային աղետների վտանգները, ինչպիսին են՝ երկրաշարժը, ջրհեղեղները, անտառային հրդեհները, տեխնոսաճին տարաբնույթ վտանգները կարող են հանգեցնել անդրսահմանային արտակարգ իրավիճակների ծագման: Այս իրավիճակը պահանջում է աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության մեջ ներառել տարածաշրջանային միասնական քաղաքականություն: Սակայն, առկա տարածաշրջանային թերի համագործակցությունը հանգեցնում է ռիսկերի ոլորտում տարածաշրջանային խնդիրների անարդյունավետ լուծմանը, կարողությունների և ռեսուրսների ընդգրկման մեխանիզմների բացակայությանը, մասնավորապես, խոչընդոտելով անդրսահմանային վտանգների կանխմանն ու կանխարգելմանը.

3) բնական վտանգավոր երևույթները, ըստ էության, չեն առաջացնում աղետներ, քանի դեռ չեն զուգակցվում հասարակության խոցելիության և ցածր դիմադրողությամբ այդ երևույթների նկատմամբ: Այդ իմաստով կլիմայի փոփոխության ազդեցությունն աղետների վտանգների վրա հնարավոր է՝

ա. վտանգավոր հիդրոոդերևութաբանական և կլիմայական երևույթների հնարավոր և սպասվող ավելացման դեպքում,

բ. վտանգավոր բնական երևույթների նկատմամբ հասարակության խոցելիության աստիճանի բարձրացման դեպքում: Վերջինիս պատճառներից են էկոհամակարգերի դեգրադացիան, բնական պաշարների և ջրային ռեսուրսների նվազեցումը, պարենամթերքների, կյանքի համար անհրաժեշտ միջոցների պակասությունը և այլն: Այսպիսով, կլիմայի փոփոխությունը լրացուցիչ բեռ է աղետների վտանգներից հասարակության դիմադրողականության հնարավորությունների համար: Այդ պատճառով արդիական խնդիր է դարձել կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումը տնտեսության և էկոհամակարգերի վրա, այդ փոփոխություններին դիմակայելու համար հարմարվողականության ծրագրերի մշակումը և դրանց ընդգրկումն ազգային և տեղական մակարդակներում.

4) անվտանգության մշակույթի անկատարությունը: Աղետների ռիսկերի նվազեցման ոլորտի գիտելիքների պակասը և անվտանգության մշակույթի անկատարությունը նպաստում են նոր վտանգների առաջացմանը, վտանգներից խոցելիության մեծացմանը և հետևաբար օժանդակում աղետների ռիսկի մեծացմանը.

5) կառավարման գործընթացների և ռեսուրսների ոչ բավարար մակարդակը: Կառավարման գործընթացների և ռեսուրսների ոչ բավարար մակարդակը հանգեցնում է որակական

ու քանակական տեսակետից ռեսուրսների համախմբման և օգտագործման մեխանիզմների բացակայությամբ.

6) տնտեսության զարգացման գործընթացի արդյունքում նոր տեխնածին վտանգները: Տնտեսության զարգացման գործընթացի արդյունքում հաճախ առաջանում են նոր տեխնածին վտանգներ իրենց առանձնահատուկ խոցող գործոններով, որոնք թելադրում են աղետների ռիսկերի նվազեցման գործընթացների զարգացման անընդհատության հետևողական ապահովում.

7) տարածական ոչ արդյունավետ պլանավորումը և անկառավարելի ուրբանիզացիան: Տարածական արդյունավետ պլանավորման անկատարությունը կարող է հանգեցնել անկառավարելի ուրբանիզացիայի՝ նպաստելով աղետների բարձր ռիսկի գոտիներում բնակչության խտության անցանկալի աճին, տարածական առումով ոչ հավասարակշռված տարաբնակեցման համակարգի ձևավորմանը՝ հանգեցնելով նոր ռիսկերի առաջացմանը և խոցելիության մեծացմանը.

8) ապակենտրոնացման թերի գործընթացը: Ապակենտրոնացման թերի գործընթացը խոչընդոտում է համայնքների ու քաղաքացիական հասարակության ներգրավմանն աղետների ռիսկերի նվազեցման գործընթացներում բերելով վերջիններիս թերի դերակատարմանը և կտրուկ կերպով նվազեցնում է աղետների ռիսկերի նվազեցման կարողությունները.

9) աղետների ռիսկերի նվազեցման դաշտում գենդերային խնդիրների առկայությունը: Գենդերային խնդիրների առկայությունը խոչընդոտում է բնակչության բոլոր շերտերի անհրաժեշտ ներգրավմանն աղետների ռիսկերի նվազեցման գործընթացում, որը հանգեցնում է մարդկային ռեսուրսների և կարողությունների ոչ արդյունավետ օգտագործմանը.

10) սոցիալական զարգացման անբավարար մակարդակը: Սոցիալական զարգացման անբավարար մակարդակն առաջին պլան է մղում մարդկանց տարրական կարիքների բավարարումը՝ պատճառ դառնալով անհավասարության խորացմանը, երկրորդ պլանում թողնելով աղետներից անվտանգության հարցերը, դրանով իսկ մեծացնելով խոցելիությունը և պատճառ դառնալով նոր ռիսկերի առաջացմանը.

11) բնական ռեսուրսների օգտագործման խնդիրները: Բնական ռեսուրսների օգտագործման ներկայիս խնդիրները հանգեցնում են ոչ միայն նոր բնապահպանական խնդիրների առաջացմանն այլև բնակչության ու տարածքների խոցելիության մեծացմանը.

12) աղետներից ապահովագրման համակարգի բացակայությունը: Աղետներից ապահովագրման համակարգի բացակայությունը թուլացնում է աղետների ռիսկերի նվազեցման

Ֆինանսական գործընթացների ճկունությունը՝ հիմնական ծանրաբեռնվածությունը թողնելով պետական և համայնքային բյուջեների վրա ու հանգեցնում է ֆինանսական կարողությունների նվազեցմանը և բնակչության ու տարածքների խոցելիության մեծացմանը.

13) կոռուպցիոն ռիսկերի առկայությունը: Կոռուպցիոն ռիսկերի առկայությունը հանգեցնում է աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում կարողությունների և ռեսուրսների նպատակային օգտագործման անարդյունավետությանը, իսկ որոշ դեպքերում նաև հանգեցնում նախաձեռնությունների և ծրագրերի խափանմանը, սակավ միջոցների փոշիացմանը.

14) հանրային առողջության նոր ռիսկերը (հիվանդություններ և համաճարակներ): Տնտեսության զարգացման, կլիմայի գլոբալ փոփոխության, նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացների արդյունքում հաճախ առաջանում են հանրային առողջությանն սպառնացող նոր ռիսկեր՝ իրենց առանձնահատուկ խոցող գործոններով, որոնք նույնպես թելադրում են աղետների ռիսկերի նվազեցման գործընթացների զարգացման անընդհատության հետևողական ապահովում.

15) ուսումնասիրությունների ոչ բավարար քանակը և մակարդակը: Ուսումնասիրությունների ոչ բավարար քանակը խոչընդոտում է աղետների ռիսկերի անձնագրավորմանը, այդ թվում՝ նաև թվայնացված քարտեզների ստեղծմանը, որը հանգեցնում է երկրի կայուն զարգացման ծրագրերում աղետների ռիսկերի հարցերով ենթածրագրերի բացակայությանը.

16) աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում օրենսդրական դաշտի անկատարությունը: Աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում ընդունված օրենքներն ու որոշումները հիմնականում կանոնակարգում են վտանգների ծագման դեպքում իրականացվող գործընթացները՝ գրեթե անտեսելով ռիսկերի նվազեցումը: Դրա հետ մեկտեղ գործող օրենքներում առկա են անհամապատասխանություններ, ինչպես միևնույն օրենքի տարբեր հոդվածների, այնպես էլ տարբեր օրենքների միջև: Բացի դրանից՝ ոլորտում օրենքների ընդունումից հետո անցած ժամանակահատվածում հանրապետությունում տեղի են ունեցել զարգացումներ, որոնք իրենց հերթին թելադրում են ընդունված օրենքների վերանայում ու կատարելագործում: Վերանայում և կատարելագործում են պահանջում նաև միջազգային զարգացումներին ինտեգրման գործընթացները.

17) յուրաքանչյուր տարի կրթական համակարգում ներդրվող նորարարությունները, գիտակրթական և ուսուցման նորագույն մեթոդների ու բազաների անհասանելիությունը բնակչության լայն զանգվածներին:

ԳԼՈՒԽ V. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

36. Հայաստանի Հանրապետությունում աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության նպատակն է՝ ձևավորել աղետակայուն երկիր՝ ապահովելով անհատի, հասարակության անվտանգության աստիճանական բարձրացումն ու կայուն զարգացումը:

37. Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության խնդիրներն են՝

1) հստակեցնել և կանոնակարգել աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գործող կառավարման մարմինների, կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, կամավորների, մասնավոր հատվածի և գիտական հաստատությունների գործառույթները, դերերը, իրավասություններն ու պատասխանատվությունները.

2) մշակել կառավարման նոր մեխանիզմներ աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված բազմաթիվ, բազմաշերտ և տարաբնույթ ռեսուրսների (հաստատութենական, մարդկային, գիտելիքի, տեղեկատվական, տեխնիկական, տեխնոլոգիական, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսներ) օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով.

3) ամրապնդել և ընդլայնել միջազգային համագործակցությունն աղետների ռիսկի նվազեցման ոլորտում առկա միջազգային կառույցներում ինտեգրվելու, միջազգային պայմանագրերին միանալու, տարածաշրջանային և անդրասահմանային նախաձեռնություններում ակտիվորեն մասնակցելու միջոցով.

4) ծավալել անվտանգության մշակույթի զարգացմանն ուղղված կանոնավոր գործունեություն՝ ապահովելով ազգաբնակչության բոլոր շերտերի շարունակական ուսուցումը.

5) ապահովել օրենսդրորեն աղետների ռիսկի նվազեցման դրույթների ներառումը և կիրառումը երկրի զարգացման ծրագրերում որպես այդ ծրագրերի հնարավորինս լիակատար իրագործման կարևորագույն երաշխիքներից մեկը.

6) գնահատել հնարավոր կլիմայական ռիսկերը և մշակել միջոցառումներ ուղղված դրանց կանխարգելմանն ու հետևանքների նվազեցմանը գլոբալ, ազգային և տեղական մակարդակներով.

7) աղետների և կլիմայական ռիսկերի նվազեցմանն ու ընդհանուր կառավարման խնդիրներն ընդունել որպես առաջնայնություններ ազգային և տեղական մակարդակներում զարգացման ծրագրերում ընդգրկելու միջոցով.

8) զարգացնել մոնիթորինգի, կանխատեսման և վաղ նախագրուշացման համակարգերը՝ աղետների վտանգները հայտնաբերելու, գնահատելու ու վերահսկելու նպատակով.

9) կլիմայի փոփոխության հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքների, նոր տեխնոլոգիաների, լավագույն փորձի տարածում և օգտագործում բոլոր մակարդակներում կայուն զարգացումն ապահովելու ու անվտանգության մշակույթ ձևավորելու նպատակով.

10) բարձրացնել տարածական պլանավորման և կիրառման արդյունավետությունը՝ ապահովելով պետության, հասարակության և անհատի շահերի փոխհամաձայնեցումը.

11) մշակել և իրականացնել շարունակական ծրագրեր՝ ուղղված աղետների ռիսկերի նվազեցման ոլորտին առնչվող կարողությունների զարգացմանը համայնքներում և աղետների ռիսկերի նվազեցման համակարգում.

12) պլանավորել և հետևողականորեն իրականացնել գործառույթներ՝ ուղղված կենսա-ապահովման կառույցների ու ցանցերի հուսալիության բարձրացմանը.

13) կատարելագործել աղետների ռիսկերի նվազեցման ոլորտը կարգավորող օրենսդրությունը՝ միասնականացնելով երկրում գործող իրավական դաշտը և ներդաշնակեցնելով այն միջազգային օրենսդրությանը.

14) ապահովել աղետների ռիսկերի նվազեցման գործողությունների ներքո գենդերային զգայուն քաղաքականության ներդրումը և իրականացումը, հավասարապես հաշվի առնել կանանց և տղամարդկանց կարիքները, խրախուսել կանանց մասնակցությունը և ներգրավվածությունը կառավարման պաշտոններում ու որոշումների կայացման համակարգում.

15) մշակել և ներդնել աղետների պատճառած վնասներից ապահովագրման համակարգ՝ ինչը ոչ միայն կնպաստի փոխհատուցումների տրամադրման գործընթացին և խոցելիության նվազեցմանը, այլև կհանդիսանա ֆինանսական ռեսուրսների գոյացման ժամանակակից հզոր մեխանիզմներից մեկը.

16) երաշխավորել աղետների ռիսկերի նվազեցման ոլորտին առնչվող բոլոր շահագրգիռ կողմերի՝ առաջին հերթին պետական կառույցների, մշտական աջակցությունն աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի զարգացման գործընթացին.

17) քնակչության մեջ ձևավորել անվտանգության և աղետներին դիմակայման մշակույթ՝ նպաստելով աղետակայուն երկրի ու հասարակության ձևավորմանը.

18) ապահովել կառավարման մարմինների և բնակչություն իրազեկվածությունն ու պատրաստվածությունը, արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում ներգրավել հասարակական կազմակերպություններին ու բնակչությանը.

19) նպաստել արձագանքող կազմակերպությունների և կառավարման մարմինների լրատվության պատասխանատուների արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության հետ աշխատանքի հնտությունների զարգացմանը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության լրատվական մարմնի ձեռք բերած փորձի հիման վրա համախմբել և զարգացնել զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը:

ԳԼՈՒԽ VI. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

38. Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության ձևավորման և իրականացման ամբողջ գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- 1) բոլոր շահագրգիռ կողմերի լիիրավ ընդգրկումը և մասնակցությունը.
- 2) աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության շարունակականությունը.
- 3) համակողմանի և համալիր մոտեցումների կիրառումը.
- 4) ժամանակակից և բարձր տեխնոլոգիաների ներդրումը.
- 5) սոցիալապես խոցելի խավերի նկատմամբ զգայուն քաղաքականությունը.
- 6) գենդերային հարցերի ներգրավումը.
- 7) կլիմայական ռիսկերի ներգրավումը.
- 8) մարդու կյանքի և առողջության ապահովման գերակայությունն այլ կորուստների նկատմամբ.
- 9) մշտական մոնիթորինգի և գնահատման անցկացումը.
- 10) հաշվետվողականությունը բոլոր շահագրգիռ կողմերին և հանրային վերահսկողությունը.
- 11) աղետների ռիսկերի նվազեցման համակարգի ապակենտրոնացման գործընթացը:

ԳԼՈՒԽ VII. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

39. Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրագործման արդյունքում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

1) աղետակայուն երկրի ձևավորումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացումը ձևավորում է աղետների դիմակայման մշակույթ՝ նպաստելով աղետների կանխմանն ու կանխարգելմանը, ինչպես նաև ռիսկերի նվազեցման հարցերը դարձնում է երկրի զարգացման ծրագրերի անբաժանելի մաս, որով և նվազեցվում է զարգացման ծրագրերի իրականացման արդյունքում հնարավոր ռիսկերի առաջացման հավանականությունը.

2) աղետների ռիսկերի նվազեցման կարողությունների ճկուն և զարգացող համակարգի ձևավորումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացումը ենթադրում է աղետների ռիսկերի նվազեցման կառավարման գործընթացներում բազմաշերտ մասնակիցների ներգրավում համախմբելով նրանց կարողությունները, միաժամանակ հանդիսանալով նաև փոխադարձ կապերի ապահովման և փոխշահավետ համագործակցության յուրահատուկ մեխանիզմ.

3) աղետների ռիսկերի նվազեցման խնդիրների ներգրավումը երկրի զարգացման ծրագրերում և ռազմավարություններում: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացումը ենթադրում է բոլոր ոլորտների, այդ թվում՝ նաև տարածքային կառավարման և ոչ պետական հատվածի, ռազմավարություններում ու զարգացման ծրագրերում աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերի ինտեգրում.

4) աղետների ռիսկերի նվազեցման աշխատանքների ընդհանուր արդյունավետության բարձրացումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացումը կհանգեցնի վտանգների կանխման, կանխարգելման համակարգված գործընթացների, ինչպես նաև խոցելիության նվազեցման հիմնավորված գործընթացների ապահովման՝ հնարավորինս կանխելով ռեսուրսների և միջոցների ոչ արդյունավետ օգտագործումը.

5) աղետների ռիսկերի նվազեցման համակարգի կառավարելիության բարձրացումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացումը ենթադրում է հաստատութենական հարցերի կանոնակարգում, հենվելով նաև աղետների ռիսկերի նվազեցման

ազգային պլատֆորմի վրա, ապահովելով բոլոր կառույցների մասնակցությունն ինչպես որոշումների կայացման, այնպես էլ՝ իրականացման գործընթացներում.

6) աղետների ռիսկերի նվազեցման կայուն հաստատութենական բազայի ձևավորումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացումը կստեղծի անհրաժեշտ իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքեր նոր կառույցների ձևավորման, գործող կառույցների աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում գործառնությունների հստակեցման, աղետների ռիսկերի նվազեցման գաղափարախոսության շուրջը բոլոր կառույցների համախմբման համար.

7) աղետների ռիսկերի նվազեցման գիտելիքների զարգացումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացումը հանգեցնում է աղետների ռիսկերի նվազեցման կրթության ներդրման, աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում մասնագետների պատրաստման, գիտական ներուժի համախմբման և համապատասխանաբար հիմնարար ու կիրառական գիտական և կրթական հաստատութենական հիմքերի ստեղծմանը: Աղետների ռիսկերի նվազեցման գիտելիքների զարգացման կիրառական հիմնական ուղղություններից է նաև միջազգային չափանիշներին և չափորոշիչներին համապատասխանող աղետների ռիսկերի թվային քարտեզների ստեղծումը.

8) աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացում և համապատասխան մշակույթի ձևավորումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության իրականացումը ենթադրում է աղետների ռիսկերի նվազեցման հարցերով լրատվության և տեղեկատվության ենթահամակարգի գործունեության ակտիվացում ու զարգացում, բնակչության իրազեկման մեխանիզմների և միջոցների կատարելագործում նպաստելով համապատասխան մշակույթի ձևավորմանը.

9) աղետներից կորուստների ու վնասների նվազեցումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության գործընթացը ենթադրում է հնարավոր հետևանքների և կորուստների նվազեցում:

ԳԼՈՒԽ VІІІ. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

40. Աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված գործունեությունը խիստ ծախսատար է և հնարավոր չէ իրականացնել հենվելով մեկ ֆինանսական աղբյուրի վրա: Անհրաժեշտ է սահմանել աղետների ռիսկերի նվազեցման առաջնահերթությունները՝ հստակ չափորոշիչներով, ժամկետներով և չափաքանակներով, համապատասխան միջոցառումներ ներառելով միջնաժամկետ և երկարաժամկետ ծախսային ծրագրերում:

41. Աղետների ռիսկերի նվազեցման գերակայությունները պետք է սահմանվեն յուրաքանչյուր ոլորտում, օրինակ, կրթություն, գյուղատնտեսություն և այլն, ներառվեն այդ կոնկրետ ոլորտի գործողությունների պլանում՝ այդ ոլորտի բյուջեից հատկացված միջոցներով իրականացվելու նպատակով (օրինակ, համայնքի դպրոցի շենքի փոփոխում և վերանորոգում):

42. Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նախապես ծախսեր կատարելով՝ տնտեսական և ֆինանսական տեսանկյունից կանխարգելումը և կանխումը 7-10 անգամ ավելի արդյունավետ է, քան հետևանքների վերացումը, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է քննարկել հակազդման այս բաղադրիչի՝ հզորացման հարցը, մասնավորապես՝

1) հայթայթել ֆինանսավորման նոր աղբյուրներ, բնակչության առողջության և շրջապատի համար վտանգ ներկայացնող կազմակերպություններին օրենսդրական փոփոխությունների արդյունքում պարտավորեցնել ապահովելու իրենց գործունեության ռիսկի գոտում գտնվող բնակչության և տարածքների պաշտպանությունը կամ իրենց եկամուտներից այդ նպատակով հատկացումներ կատարելու համապատասխան համայնքների կամ պետական բյուջեներ.

2) ստեղծել հիմնադրամներ և զարգացման այլ կառույցներ (մարդասիրական, աղետների հակազդման և այլն).

3) ընդլայնել միջազգային ծրագրերը՝ այս գործում պետությունը պետք է իրականացնի գործուն աջակցություն և խրախուսի այդ ծրագրերը.

4) տնտեսական և այլ գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց տրամադրել հարկային և մաքսային արտոնություններ, եթե նրանց գործունեությունը կապված է՝

ա. բնակչության պաշտպանության հետ նախատեսվող ապաստարանների կառուցման կամ վերանորոգման, փրկարարական գործողությունների ծավալման հետ անհրաժեշտ սարքավորումների, ինժեներական տեխնիկայի արտադրության, ձեռք բերման, օգտագործման ուղղությամբ,

բ. գոյություն ունեցող վտանգների և ռիսկերի նվազեցման ուղղությամբ՝ հակասողանքային միջոցառումների իրականացման, սելավատարների, հեղեղատարների, ջրահեռացման համակարգերի մաքրման, վերանորոգումների և կառուցման հետ.

5) նոր շինարարություն ծավալելիս համապատասխան օրենքներով շինարարական աշխատանքների պատվիրատուներին պարտադրել կառուցելու ապաստաններ, հրդեհամարման համակարգեր և փրկարարական աշխատանքներին նպաստող այլ համակարգեր.

6) բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում հաշվի առնել ինչպես բուն բնակավայրի դիրքի ընտրությունը, այնպես էլ արտադրական հզորությունների և առողջապահական հիմնարկների նպատակահարմար բաշխումը՝ արտակարգ իրավիճակների կանխման, կանխարգելման և փրկարարական աշխատանքների արդյունավետ ծավալման և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպման տեսանկյունից:

43. Արտակարգ իրավիճակների վերացման համար պետական նյութական պահուստում անհրաժեշտ կլինի առանձնացնել նյութական արժեքների հատուկ խումբ: Նշված խմբի նյութական արժեքները նախատեսել արտակարգ իրավիճակներում բնակչությանն օպերատիվ մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար և իրենց մեջ պետք է ներառեն արագ պատրաստվող սննդամթերք, առաջին օգնության բժշկական ու սանիտարական ապրանքներ: Պետական պահուստից նշված խմբի նյութական արժեքների բացթողման համար պետք է սահմանվի պարզեցված կարգ:

44. Աղետների ռիսկերի նվազեցման համակարգի ֆինանսավորման աղբյուրները պետք է լինեն՝

- 1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն.
- 2) տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները.

- 3) «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի միջոցները.
- 4) բնակչության առողջության և շրջապատի համար վտանգ ներկայացնող կազմակերպությունների ներդրումները.
- 5) միջազգային և այլ դոնորների ներդրումները.
- 6) հնարավոր վարկային միջոցները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ